



**ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ, ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2019-  
2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԵՄՈՆՍՏՐԱՏԻՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՕՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ  
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

ՀՀ արդարադատության նախարարության կողմից շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագծի (*այսուհետ՝ Նախագիծ*)<sup>1</sup> առնչությամբ Իրավաբանների հայկական ասոցիացիայի (այսուհետ՝ ԻՀԱ) և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի (այսուհետ՝ Կոալիցիա) նկատառումները հանգում են հետևյալին:

**ՆԱԽԱԳԾԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրավունքի գերակայության ամրապնդում**

1. Նախագծում որպես ռազմավարական ուղղություն նշվել է՝ «Անցումային արդարադատության գործիքակազմի կիրառման միջոցով իրավունքի գերակայության ամրապնդում»: Սակայն, Նախագծի հետագա տեքստի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ անցումային արդարադատության 4 հիմնական գործիքներից կիրառվելու է միայն **ճշմարտության որոնման կամ փաստահավաք խմբի գործիքակազմը**, առանց անդրադարձ կատարելու անցումային արդարադատության իրականացման այնպիսի կարևորագույն գործիքների, ինչպիսիք են՝ հանդիսանում քրեական արդարադատության իրականացումը, փոխհատուցումները և համակարգային բարեփոխումները: Չնայած այն հանգամանքին, որ փոխհատուցումների և քրեական արդարադատության իրականացման վերաբերյալ որոշակի կարգավորումներ առկա են Նախագծի փաստահավաք հանձնաժողովի վերաբերյալ

<sup>1</sup> «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծը հասանելի է այստեղ. <https://www.e-draft.am/projects/1900>:

միջոցառումներում, այդուհանդերձ, այդ գործողությունները բավարար չեն լիարժեք կերպով անցումային արդարադատության իրականացնելու համար: Ուստի, առաջարկում ենք Նախագծով համալիր լուծումներ նախատեսել՝ սահմանելով անցումային արդարադատության չորս մեխանիզմների իրականացմանն ուղղված հստակ նպատակներ, վերջնարդյունք և միջոցառումներ:

2. Պետք է փաստել, որ Նախագծում հստակորեն ներկայացված չէ, թե որն է փաստահավաք հանձնաժողովի ստեղծման **նպատակը և վերջնարդյունքը**, որը նախատեսվում է նվաճել ռազմավարական այս ուղղության կատարման արդյունքում: Դա չի երևում նաև ռազմավարական ուղղության անվանումից: Թերի է ներկայացված նաև այս գործիքակազմի ներդրման անհրաժեշտությունը: Այսպես, ըստ Նախագծի՝ *Հանձնաժողովի գործունեության վերջնարդյունքը զեկույցի հրապարակումն է, որտեղ արտացոլված են փաստահավաք գործունեության ընթացքում հավաքված տեղեկությունները*: Գտնում ենք, որ այս ձևակերպումը չի կարող որակվել որպես վերջնարդյունք, այն կատարված որոշ աշխատանքների վերաբերյալ սուկ հաշվետվության ներկայացում է հանրությանը: Հետևապես, առաջարկում ենք Նախագծում սահմանել, թե որն է այս ռազմավարական ուղղության նպատակը և վերջնարդյունքը:

3. Ըստ Նախագծի՝ *Փաստահավաք հանձնաժողովը ձևավորվելու է 2020 թվականի առաջին եռամսյակի ընթացքում: Հանձնաժողովը կազմված է լինելու առավելագույնը 20 անդամից*: Գտնում ենք, որ այս կարգավորումը հիմնավորված չէ, ինչպես նաև՝ խնդրահարույց է: Նախ՝ Նախագծից պարզ չէ, թե ինչն է որոշվել Հանձնաժողովում ունենալ 20 անդամ, որոնք են այն հիմնական հայեցակարգային մոտեցումները, որոնց ցուցաբերվելու են Հանձնաժողովի անդամների նշանակման/ընտրության հարցում, որոնք են այն սկզբունքները, որոնց հիման վրա կազմավորվելու է հանձնաժողովը: Առաջարկում ենք հիմնավորվել, թե ինչն է որոշվել Հանձնաժողովում ունենալ 20 անդամ, որոնք են այն հայեցակարգային մոտեցումները և սկզբունքները, որոնցով պայմանավորված ձևավորվելու է Հանձնաժողովը:

4. Նախագծում անցումային արդարադատության իրականացման անհրաժեշտությունը հիմնավորելիս հղումներ են կատարված մի շարք միջազգային կազմակերպությունների զեկույցների: Սակայն այդ զեկույցների բովանդակությունը ներկայացված չէ Նախագծում, որը ընթերցողի մոտ կարող է անցումային արդարադատության

կիրառելիության անհրաժեշտության վերաբերյալ ողջամիտ կասկածներ առաջացնել: Ուստիև, առաջարկում ենք նշյալ զեկույցներից առանձնացնել էական նշանակություն ունեցող դրույթները և ներառել դրանք Նախագծում:

5. Շարունակելով Նախագծով Հայաստանում առկա իրավիճակի վերաբերյալ տարբեր զեկույցներից ներկայացված հղումներին անդրադարձը, առաջարկում ենք Նախագծով անդրադառնալ նաև «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության մշակած «Անցումային արդարադատության մեխանիզմների կիրառելիության հնարավորությունը ՀՀ-ում՝ միջազգային փորձի լույսի ներքո» զեկույցին:<sup>2</sup> Իրավամբ, Հայաստանում այն առաջին զեկույցն է, որտեղ ներկայացվել է անցումային արդարադատության ներդրման պրակտիկան շուրջ 35 երկրներում, շեշտադրումներ կատարելով ինչպես հաջողված, այնպես էլ ձախողված փորձերին: Այնուհետև, զեկույցը լուծումներ է առաջարկել Հայաստանում անցումային արդարադատության մեխանիզմների ներդրման և կիրառման վերաբերյալ: Այդ կապակցությամբ, 2018 թվականի դեկտեմբերին ԻՀԱ-ն կազմակերպել էր նաև լայնամասշտաբ փորձագիտական համաժողով, որտեղև քննարկվել է անցումային արդարադատության կիրառելիության հնարավորությունը ՀՀ-ում՝ միջազգային փորձի լույսի ներքո: Հիշյալ զեկույցը ներկայացվել է նաև 2019 թվականի մայիսի 24-ին ՀՀ Ազգային ժողովում անցումային արդարադատությանը նվիրված տեղի ունեցած խորհրդարանական լսումների ընթացքում: Ի լրումն, գտնում ենք, որ խորհրդարանական լսումների և դրանում ԻՀԱ-ի կողմից զեկույցի ներկայացման վերաբերյալ հղումները նույնպես պետք է արձարծվեն Նախագծում:

6. Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անցումային արդարադատության իրականացմանը նախորդող ժամանակահատվածում անհրաժեշտ է հանրային իրազեկման աշխատանքներ իրականացնել, որոնց շնորհիվ հասարակությունը պատկերացում կկազմի՝ թե ինչ է իրենից ներկայացնում անցումային արդարադատությունը, որոնք են դրա իրականացման մեխանիզմները: Նախագիծը կարգավորումներ չի պարունակում հանրային իրազեկության աշխատանքների իրականացման մասին: Միջազգային փորձը նաև ցույց է տալիս, որ հանրային իրազեկության բացակայությունը որոշ ուժերի համար կարող է նպաստավոր պայմաններ ստեղծել հանրությանը անցումային արդարադատության վերաբերյալ

---

<sup>2</sup> Իրավաբանների հայկական ասոցիացիայի կողմից մշակած «Անցումային արդարադատության մեխանիզմների կիրառելիության հնարավորությունը ՀՀ-ում՝ միջազգային փորձի լույսի ներքո» խորագրով զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ. <https://armla.am/41375.html>:

խեղաթուրված տեղեկության տրամադրելու համար: Առաջարկում ենք Նախագծում մեջ որպես գործողություն նախատեսել հանրային իրազեկության իրականացումը:

7. Նախագծով սահմանված անցումային արդարադատության որոշ գործիքների արդյունավետ իրականացման համար հարկավոր է անդրադարձ կատարել կոռուպցիոն բնույթի հանցագործություններին, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանը և ապրիլյան քառօրյա պատերազմի դեպքերին: Կարծում ենք, որ **կոռուպցիոն բնույթի հանցագործություններին** անդրադարձ կատարելը կարևոր է հետագայում նմանատիպ հանցագործությունների կրկնությունը բացառելու համար, քանի որ հանրության կողմից ապրիլյան հեղափոխության իրականացման հիմնական շարժառիթներից մեկը՝ համակարգային կոռուպցիան էր: **Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը** կենսական նշանակություն ունի արդարադատության վերականգնման և այդ գործընթացների նկատմամբ հանրության վստահության բարձրացման տեսանկյունից: Իսկ **ապրիլյան քառօրյա պատերազմի** վերաբերյալ հանրությունը պատմական ճշմարտությունը պարզելու խնդիր ունի:

8. Նախագծով ստեղծվելու է փաստահավաք հանձնաժողով: Փաստահավաք հանձնաժողովի ստեղծումը ինքնին բավարար չէ, անհրաժեշտ է նաև ստեղծել ճշմարտության և հասարակական համերաշխության հանձնաժողով: Նշյալ եզրույթի կիրառելիությունը լայն տարածում է ստացել միջազգային պրակտիկայում և այդպիսի հանձնաժողովները որպես կանոն նպատակ են հետապնդում բացահայտելու պատմական ճշմարտությունը և հաստատելու հասարակական համերաշխություն: Հանրության կողմից ճշմարտությունն իմանալու իրավունքը ամրագրված է մի շարք միջազգային պայմանագրերով: Վերոգրյալի հիման վրա, առաջարկում ենք ստեղծել ճշմարտության և հասարակական համերաշխության հանձնաժողով, որը կզբաղվի նաև փաստահավաք աշխատանքներով:

***Ստորև ներկայացվում է ճշմարտության հանձնաժողովի չափորոշիչները՝ ըստ միջազգային փորձի:***

Ճշմարտության և հասարակական հաշտության հանձնաժողովները արտադատական, հետաքննող մարմիններ են հանդիսանում, որոնք ստեղծվում են մարդու իրավունքների կամ միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտումների փաստերն հաստատելու համար: Որպես կանոն, նմանատիպ հանձնաժողովների անդամներն իրավասու են իրականացնել մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ ուսումնասիրություններ,

աջակցել զոհերին և առաջարկներ ներկայացնեն, թե ինչպես բացառել հանցագործությունների կատարման կրկնությունը: Նման մարմինները կարող են աջակցել համակարգային բարեփոխումներ և քրեական արդարադատություն իրականացնելու գործընթացներին: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ այսպիսի հանձնաժողովների գործունեության կենտրոնը՝ տուժողներն են, և հանձնաժողովները հասարակական համերաշխություն իրականացնելու մանդատ են ստանում: Մինչ օրս, աշխարհի տարբեր երկրներում ստեղծվել են ավելի քան 30 ճշմարտության և հասարակական համերաշխության հանձնաժողովներ:<sup>3</sup>

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ նշյալ հանձնաժողովները իրենց գործունեության հիմքում ունենում են այնպիսի հիմնարար սկզբունքներ, ինչպիսիք են՝ անկախությունը, կոմպլիմենտարությունը, զոհերին աջակցություն տրամադրելը, ճկունությունը:

- **Անկախություն.** քանի որ ճշմարտության հանձնաժողովները ստեղծվում են հատուկ պայմաններում, նրանց հաջողությունը կախված է հանձնաժողովի գործունեության նկատմամբ հասարակական վստահության աստիճանից, ինչն իրենից ենթադրում է, որ հասարակությունը պետք է վստահ լինի, որ հանձնաժողովը անկախ է պետական կամ հասարակական ճնշումներից: Նշյալ հանձնաժողովը պետք է լիակատար ինքնավարություն ունենա՝ տնօրինելու իր ռեսուրսները, անցկացնելու քննություններ և ներկայացնելու հանրային քաղաքականության բարելավման առաջարկություններ:
- **Կոմպլիմենտարություն.** Ճշմարտության հանձնաժողովները ավելի լավ են աշխատում այն դեպքում, երբ լրացնում են պետական իշխանության այլ մարմիններին: Օրինակի համար, հանձնաժողովի կողմից ձեռք բերված ապացույցները կարող են հիմք հանդիսանալ իրավապահ մարմինների կողմից նախնական քննություն իրականացնելու համար:
- **Տուժողներին, տուժողների իրավահաջորդներին աջակցություն.** տուժողները և/կամ տուժողների իրավահաջորդները գտնվում են այս գործընթացների կենտրոնում և հանդիսանում են նմանատիպ հանձնաժողովի գործունեության առանցքը: Նրանց ցուցմունքների միջոցով ճշմարտություն փնտրելը կրթում է հասարակությանը և ձեռնամուխ լինում նրանց խախտված իրավունքների վերականգնմանը:
- **Ճկունություն.** Ճշմարտության հանձնաժողովները ունենալով անկախության երաշխիքներ, պետք է ձեռնամուխ լինեն հասարակական համերաշխության

---

<sup>3</sup> Տե՛ս նույնը տեղը, էջ 10:

հաստատմանը: Օրենսդրական դժվարությունները չպետք է հանձնաժողովին կաշկանդի օրինական և նորարարական միջոցներով լուծել իր առջև դրված խնդիրները:

*Ճշմարտության հանձնաժողովների գործունեության համար առանցքային համարվող գործիքներ.*

- **Լսումների անցկացումը.** սա հանձնաժողովին հնարավորություն է ընձեռում մոտիկից շփում ունենալ տուժողների հետ և նրանց ձայնը լսելի դարձնել:
- **Զեկույցի կազմում.** սա նպատակ է հետապնդում արձանագրել մարդու հիմնարար իրավունքների խախտումների վերաբերյալ պատմական ճշմարտությունը և այն փոխանցել ապագա սերունդներին:
- **Հիշատակի արարողությունների իրականացում.** սա կարող է դրսևորվել հիշատակի օրերի սահմանմամբ, կամ էլ՝ հուշարձաններ հիմնադրելով, որպեսզի մարդու հիմնարար իրավունքների խախտումները մոռացություն չմասնվեն:
- **Հանրային քաղաքականության վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.** հանձնաժողովները կարող են համակարգային բարեփոխումներ իրականացնելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել իրավասու մարմիններին, որպեսզի մարդու իրավունքները խախտող մարմինները դառնան մարդու իրավունքները պաշտպանող մարմիններ:<sup>4</sup>

9. Փաստահավաք հանձնաժողովի գործունեությունը սահմանելիս, առաջարկում էր կարգավորումներ նախատեսել այն մասին, որ նշյալ հանձնաժողովը համագործակցություն է իրականացնելու միջազգային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նմանատիպ համագործակցության իրականացումը կենսական նշանակություն ունի հանձնաժողովի արդյունավետ գործունեությունը երաշխավորելու տեսանկյունից:

10. Ըստ Նախագծի՝ *Հանձնաժողովի գործողության ժամկետը 2 տարի է՝ հնարավորություն նախատեսելով անհրաժեշտության դեպքում ժամկետը երկարաձգել ևս 1 տարով:* Գտնում ենք, որ Հանձնաժողովի գործունեության համար 2 տարի ժամկետ նախատեսելը նույնպես խնդրահարույց կարող է լինել, քանի որ հանձնաժողովը քննելու է շուրջ

<sup>4</sup> Տե՛ս <https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Global-Truth-Commissions-2008-English.pdf>:

30 տարվա պատմություն և գործերի ծանրաբեռնվածությունից ելնելով՝ այս սահմանափակ ժամկետը կարող է հանձնաժողովի գործունեությունը անավարտ թողնել: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ նմանատիպ հանձնաժողովները իրենց գործունեությունը միջին կտրվածքով վերցրած 3-5 տարի ժամանակահատվածում են իրականացնում: Ուստի, առաջարկում ենք հանձնաժողովի գործունեության համար սահմանել առնվազն երեք տարի:

11. Ռազմավարության մեջ նշվում է, որ *անցումային արդարադատության գործիքների կիրառման, ստացված տեղեկությունների ամփոփման, զեկույցի պատրաստման և հրապարակման արդյունքում պետք է դիտարկել ինստիտուցիոնալ բարեփոխումների կիրառման հնարավորությունը բոլոր այն ոլորտներում, որտեղ տեղեկությունները վկայում են համակարգային խնդիրների առկայության մասին: Դա պետք է արտացոլվի նաև մշտադիտարկման այնպիսի համակարգերի ներդրմամբ, որոնց կիրառումը կբացահայտի հնարավոր խախտումները և կահագանգի դրանց առկայության վերաբերյալ: Այդ բարեփոխումների նպատակը պետք է լինի այն հիմնադրույթը, որ խախտումները այլևս երբեք չպետք է կրկնվեն:* Կարծում ենք, որ նմանատիպ կարգավորում սահմանելը կարող է ինդրահարույց լինել, քանի որ համակարգային բարեփոխումներ պետք է իրականացվեն անկախ փաստահավաք խմբի գործունեությունից: Ռազմավարության ներկայիս ձևակերպումներից հասկանում ենք, որ համակարգային բարեփոխումները միայն հանձնաժողովի գործունեության ավարտից հետո պետք է մեկնարկվեն, մոտավորապես 2023 թվականին: Նման մոտեցումը անընդունելի է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշյալ հանձնաժողովը կարող է նաև հաջողություն չգրանցել: Հետևապես, առաջարկում ենք, որ համակարգային բարեփոխումների իրականացումը՝ որպես առանձին միջոցառում նախատեսել Նախագծում, ընդ որում՝ նշելով նաև համակարգային բարեփոխումների ոլորտները, հիմնական խումբ գործողությունները և ակնկալվող արդյունքները:

**ՆԱԽԱԳԾԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. Մահմանադրական բարեփոխումների անցկացում**

Նախագիծը ի թիվս այլնի, *որպես ռազմավարական նպատակ է ամրագրել՝ սահմանադրական բարեփոխումների անցկացումը*, իսկ արդեն Ռազմավարությունից բխող 2019-2020 թվականների և 2021-2023 թվականների գործողությունների ծրագրերով (այսուհետ՝ համապատասխանաբար Գործողությունների ծրագիր 1 և Գործողությունների ծրագիր 2)

սահմանադրական բարեփոխումների անցկացման (իրականացման) համար առանձնացվել են կոնկրետ ռազմավարական ուղղություններ և նախատեսել համապատասխան գործողություններ: Այդ առնչությամբ նախ անդրադառնալով Նախագծով՝ սահմանադրական բարեփոխումները որպես ռազմավարական նպատակի սահմանմանը, հարկ ենք համարում նշել, որ նախ՝ նշված տեսքով նպատակի սահմանումը վիճահարույց է, ապա՝ *Ռազմավարությամբ թերի կամ հատվածային են ներկայացված սահմանադրական բարեփոխումների իրականացման իրավաքաղաքական նախադրյալները:*

Նախագծում չեն առանձնացվել սահմանադրական բարեփոխումներով պայմանավորված *սահմանադրականության զարգացման նոր փուլի առավել էական ասպեկտները, դրանց ուղղվածությունն ու ակնկալվելիք արդյունքները*, մինչդեռ անհրաժեշտ էր անդրադարձ կատարել սահմանադրական բարեփոխումների հիմնական ուղղություններին, նկարագրել սպասվող հիմնական փոփոխություններն ու ներկայացնել ակնկալվող արդյունքները: Միայն Գործողությունների ծրագիր 2-ի Նպատակ 2-ով որպես արդյունք ներկայացված է, որ. «Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովը մշակել է սահմանադրական բարեփոխումների նախագիծը, որն անդրադառնում է առնվազն հետևյալ սկզբունքային հարցերին՝ Սահմանադրության ուղղակի գործողությունը, միջազգային պայմանագրերի տեղը մեր իրավական համակարգում, վերպետական կառույցներին անդամակցելիս տվյալ վերպետական կառույցի ընդունած նորմատիվ իրավական ակտերի կիրառելիության առանձնահատկությունները, Սահմանադրությամբ նախատեսված մարմիններին տրված լիազորությունների շրջանակը, Ազգային ժողովի պատգամավորների ընտրության և խորհրդարանական մեծամասնության ձևավորման կարգը, ինչպես նաև պատգամավորների թիվը, Սահմանադրությամբ նախատեսված Կառավարությանը, վարչապետին և նախարարություններին ենթակա այլ մարմիններ կազմավորման և լիազորությունների հետ կապված հարցերը, Սահմանադրությամբ նախատեսված մարմինների միջև լիազորությունների տարանջատումը և հավասարակշռումը, Բարձրագույն դատական խորհրդի դերը և լիազորությունները», ինչը, իհարկե, հնարավորություն չի տալիս գնահատելու, թե, արդյոք, այդ բարեփոխումների շրջանակներում անդրադարձ կկատարվի այն խնդրահարույց հարցադրումներին, որոնք ի հայտ են եկել 2015 թվականի սահմանադրական բարեփոխումներից հետո: Հարկ է նշել, որ եթե, օրինակ, Ռազմավարությամբ ամրագրվում է, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների իրականացումը որոշակիորեն ուղղորդված է եղել այդ փոփոխությունները նախաձեռնող քաղաքական ուժի շահերով,



- 1) ապա ինչո՞ւ որպես նախատեսվող բարեփոխումների առանցքային ուղղություն չի նշվում *կառավարման խորհրդարանական մոդելից կիսանախագահական մոդելին անցնելու նպատակահարմարության հարցի դիտարկումը*, կամ
- 2) արդյո՞ք, խորհրդարանական կառավարման ձևի պարագայում լուծվել է Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում վեր հանված՝ *քաղաքական համակարգի գերանձնավորվածության ու գերկենտրոնացվածության հարցը*, քանի որ, ինչպես ցույց է տվել իրականությունը, և՛ 2005 թվականի, և՛ 2015 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում այդ հարցին պատշաճ լուծում չի հաջողվել տալ, կամ
- 3) արդյո՞ք պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի *եռաթև ինստիտուցիոնալ (կառուցակարգային) բաժանման տեսանկյունից Սահմանադրությամբ նախատեսված կարգավորումները հստակ են, թե՛ ոչ*, արդյո՞ք այդ բաժանման կառուցակարգերում հստակ է Հանրապետության նախագահի և անկախ (ինքնուրույն) սահմանադրական մարմինների կարգավիճակը, կամ
- 4) արդյո՞ք ներկայիս իրողությունները հաշվի առնելով, անհրաժեշտություն չի առաջանում դիտարկելու սահմանադրական նորմերի պաշտոնական մեկնաբանման լիազորություն որևէ մարմնի տալու հարցը և դրա սահմանադրական հստակ կարգավորումներով ամրագրելու հարցը, ինչպես դա արված է Մոլդովայի, Ուկրաինայի, Ռուսաստանի և այլ երկրների սահմանադրություններով, կամ
- 5) ինչու՞ որպես առանցքային ուղղություն չի դիտարկվում *խորհրդարանական մեծամասնության և ընդդիմության միջև գործառնության հավասարակշռության ապահովումը*, արդյո՞ք բավարար է խորհրդարանական կառավարման ձևի պարագայում ընդդիմության վերապահված լիազորությունները, որպեսզի ընդդիմությունը իրապես կարողանա զսպել և հավասարակշռել խորհրդարանական մեծամասնությանը, կամ
- 6) արդյո՞ք ապահովված է օրենսդիր-գործադիր իշխանության ճյուղերի փոխհարաբերություններում *գործադիր իշխանության նկատմամբ խորհրդարանական վերահսկողության համար անհրաժեշտ իրավական մեխանիզմները*, կամ
- 7) արդյո՞ք իշխանության որևէ ճյուղի մեջ չընդգրկված անկախ (ինքնուրույն) սահմանադրական մարմիններին իրավունք կտրվի պետական իշխանության մարմինների միջև՝ իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ

առաջացող վեճերի լուծման հիմքով դիմելու Սահմանադրական դատարանը, թե՛ ոչ, կամ

- 8) արդյո՞ք ներկայիս իրողությունները հաշվի առնելով, անհրաժեշտություն չի առաջանում նախատեսել Սահմանադրության ուժով անձեռնմխելիությամբ օժտված պաշտոնատար անձանց՝ իրենց լիազորությունների ժամկետում և դրանից հետո իրենց կարգավիճակից կամ գործունեությունից բխող գործողությունների համար հետապնդելուց և պատասխանատվության ենթարկելուց արդյունավետ պաշտպանելու համար անհրաժեշտ սահմանադրաիրավական կարգավորումներ:

Վերոնշյալ հարցադրումները սպառիչ չեն և դրանցում ներառված են ինչպես առավել ընդգրկուն, այնպես էլ առավել նեղ սահմանադրաիրավական կարգավորման ենթակա խնդիրներ, որոնք եղել կամ ի հայտ են եկել 2015 թվականի սահմանադրական բարեփոխումներից առաջ և հետո: Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ դրանք այն ուղենիշներն են, որոնք պետք է քննարկման առարկա դառնան Հայաստանում սահմանադրականության զարգացման նոր փուլում:

*Հիմք ընդունելով վերոգրյալը, առաջարկում ենք՝*

12. Նախագծով պատշաճ անդրադարձ կատարել սահմանադրական բարեփոխումների իրականացման իրավաքաղաքական նախադրյալներին և ներակայացնել անհրաժեշտ հիմնավորումներ՝ սահմանադրական նոր բարեփոխումներ նախաձեռնելու անհրաժեշտության մասին:

13. Հնարավորինս որոշակիացնել սահմանադրականության զարգացման նոր փուլում սպասվող առավել կարևոր ռազմավարական ուղղությունները, ինչպես նաև նախատեսել որակական արդյունքային ցուցանիշներ:

**ՆԱԽԱԳԾԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ. Ընտրական օրենսդրության բարեփոխում**

Ռազմավարությամբ որպես ռազմավարական նպատակ է սահմանված **ընտրական օրենսդրության բարեփոխումների իրականացումը**, որի անհրաժեշտությունը հիմնավորվում է **Հայաստանում ժողովրդավարական ընտրական համակարգի ինստիտուցիոնալ կայացմամբ**: Բացի այդ, հիմնավորման մեջ նշվում է, որ ընտրական օրենսդրության մեջ անհրաժեշտ է նախատեսել այնպիսի կառուցակարգեր, որոնք 2018 թվականի դեկտեմբերի 9-ի ՀՀ ԱԺ

արտահերթ ընտրություններից հետո ամրագրված ձեռքբերումները կդնեն օրենսդրական հենքի վրա:

Այդ առնչությամբ հարկ ենք համարում նշել, որ Նախագծով, ինչպես վերոնշյալ, այնպես էլ այս ռազմավարական նպատակի ամրագրման հիմնավորումները ներկայացված են թերի և հատվածական, ինչը հնարավորություն չի տալիս գնահատելու, թե 2016 թվականին ընդունված ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի ընդունումից հետո կիրառության ընթացքում դրա հետ կապված ի՞նչ հիմնական խնդիրներ են առկա և ի՞նչ լուծումներ են առաջարկվելու հետագա բարեփոխումների ընթացքում:

**Օրինակ 1.** Նախագծով անդրադարձ է կատարվել միայն 2018 թվականի դեկտեմբերի 9-ի ՀՀ ԱԺ արտահերթ ընտրություններին և հղում արվել այդ ընտրությունների երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդական առաքելության ամփոփիչ զեկույցին, այնինչ, գտնում ենք, որ անհրաժեշտ էր անդրադառնալ նաև 2017 թվականի ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրություններին՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ 2 ընտրություններն էլ կայացել են նույն ընտրական օրենսգրքով:

**Օրինակ 2.** Նախքան 2016 թվականի մայիսի 25-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի ընդունումը «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) նույն թվականի մայիսի 10-ին իր կայքում հրապարակվել է այդ հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համատեղ կարծիքը՝ ՀՀ ընտրական օրենսգրքի նախագծի վերաբերյալ<sup>5</sup>, որում ներառված ոչ բոլոր առաջարկություններն են տեղ գտել օրենսգրքում, ուստի արդյո՞ք օրենսգրքում չներառված առաջարկությունները պատշաճ ուսումնասիրության առարկա են դառնալու:

**Օրինակ 3.** Նախագծով անդրադարձ չի կատարվում նրան, թե ինչ ընթացք է ունենալու ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 19-ին թիվ 790-Ա որոշմամբ ստեղծված *ՀՀ վարչապետին առնթեր ընտրական օրենսդրության բարեփոխումների հանձնաժողովը* և նրա կողմից մշակված *ընտրական օրենսդրության բարեփոխումների հայեցակարգը*<sup>6</sup> Արդյո՞ք կատարված աշխատանքները ընդունվելու են որպես ելակետ, կամ՝ արդյո՞ք այդ հանձնաժողովը շարունակելու իր գործունեությունը բարեփոխումների նոր փուլում:

<sup>5</sup> Տե՛ս [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2016\)019-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2016)019-e):

<sup>6</sup> Տե՛ս Ընտրական օրենսդրության բարեփոխումների հայեցակարգը հետևյալ հղմամբ. [https://www.gov.am/u\\_files/file/A-Mirzoyan/EL-Code%20concept%20adopted%20AM.pdf](https://www.gov.am/u_files/file/A-Mirzoyan/EL-Code%20concept%20adopted%20AM.pdf):

**Օրինակ 4.** Նախագծով անդրադարձ չի կատարվում 2017թ.-ի ապրիլի 2-ի<sup>7</sup> հերթական և 2018 թվականի դեկտեմբերի 9-ի<sup>8</sup> արտահերթ խորհրդարանական ընտրությունների ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելություն վերջնական գեկույցներում տեղ գտած հանձնարարականներին, որոնցից թեև շատերը կարող են ներառվել ընտրական օրենսդրության բարեփոխումների ռազմավարական առանձին ուղղություններում, այնուամենայնիվ, դրանցում առկա մի շարք հանձնարարականների անհրաժեշտ էր հատուկ ուշադրություն դարձնել և դրանք դիտարկել որպես առանձին ռազմավարական ուղղություն: Օրինակ՝ *քարոզարշավի ֆինանսավորման վերահսկողության արդյունավետության ու թափանցիկության բարձրացում, մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի սահմանափակումների վերացում, ֆիզիկական հաշմանդամություն և տեղաշարժման սահմանափակումներ ունեցող անձանց համար քվեարկության ընթացակարգերի հասանելիությունը մեծացնող միջոցների ձեռնարկում, մեկից ավելի քաղաքացիություն ունեցող անձանց առաջադրման իրավունքի սահմանափակումների վերացում, լրատվամիջոցների սեփականության լիարժեք թափանցիկության ապահովում՝ իրական սեփականատերերի հստակ բացահայտում, ընտրողների անձնական տվյալների պաշտպանություն՝ միննույն ժամանակ ընտրական շահառուների համար պատշաճ հասանելիություն պահպանելով ընտրացուցակներին և այլն:*

**Օրինակ 5.** Նախագծում չեն կոնկրետացվել այն ինստիտուտները, որոնք պետք է բարեփոխվեն համապատասխան միջոցառում և դրա ուղղությունները, իսկ միջոցառման ներքո բերված հիմնավորումները, որպես ուղղություն բերված փաստարկները հռչակագրային դրույթներ են: *Մասնավորապես, զինձառայողների և ազատությունից զրկված անձանց քվեարկության նկատմամբ որևէ միջամտության բացառումը, ընտրողների ցուցակների կազմման և վարման գործընթացի արդյունավետության բարձրացումը, բանավեճի և լուսաբանման վերաբերյալ կարգավորումների բարեփոխումը, դիտորդական գործունեությամբ ընտրական գործընթացների վերահսկողության բարեփոխումը* իրացման որևէ կոնկրետ ուղենիշ չեն պարունակում: Ռազմավարությամբ նշված չէ՝ նշված ուղղություններով բարեփոխումները ի՞նչ պիտի ենթադրեն, հատկապես ո՞ր ինստիտուտի իրավակարգավորումը պետք է փոխվի և ինչպես: Օրինակ, *ընտրողների ցուցակի կազմման և վարման գործընթացի արդյունավետության բարձրացումը, զինձառայողների և ազատությունից զրկված անձանց*

<sup>7</sup> Տե՛ս 2017թ.-ի ապրիլի 2-ի խորհրդարանական ընտրությունների ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելություն վերջնական գեկույցը հետևյալ հղմամբ. <https://www.osce.org/hy/odihr/elections/armenia/333491?download=true>, էջեր 34-37:

<sup>8</sup> Տե՛ս 2018 թվականի դեկտեմբերի 9-ի արտահերթ խորհրդարանական ընտրությունների ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելություն վերջնական գեկույցը հետևյալ հղմամբ՝ <https://www.osce.org/hy/odihr/elections/armenia/413564?download=true>, էջեր 38-42:

*քվեարկության նկատմամբ որևէ միջամտության բացառումը, դիտորդական գործունեությամբ ընտրական գործընթացների վերահսկողության բարեփոխումը կոնկրետ ինչպիսի՞ լրացուցիչ գործիքի ներմուծում են ենթադրում դեպի օրենսդրություն:*

Օրինակներով բերված և այլ նմանաբնույթ հարցերը պիտի մանրամասն հիմնավորվեն ներկայացված նախագծով: Ասվածը վերաբերում է նաև ընտրական գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնող դերակատարների պատշաճ գործունեությունը երաշխավորելու, ընտրական վեճերի գործընթացները հստակեցնելու, դրանց արդյունավետությունը բարձրացնելու և այլ միջոցառումներին, որոնք չունեն որևէ հասցեավորված ու թիրախային բնույթ:

*Հիմք ընդունելով վերոգրյալը, առաջարկում ենք՝*

14. Ռազմավարությամբ պատշաճ անդրադարձ կատարել ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենսգրքի կիրառության ընթացքում վեր հանված, ինչպես նաև 2016 թվականի մայիսի 10-ի Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ՀՀ ընտրական օրենսգրքի նախագծի վերաբերյալ համատեղ կարծիքում տեղ գտած խնդիրներին, ինչպես նաև նշել, թե արդյո՞ք հիմք է ընդունվելու 2018 թվականի ընթացքում մշակված և ԱԾ ներկայացված ընտրական օրենսգրքի նախագիծը, թե՛ ոչ:

15. Որպես առանձին ռազմավարական ուղղություն դիտարկել քարոզարշավի ֆինանսավորման վերահսկողության արդյունավետության ու թափանցիկության բարձրացումը, մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի սահմանափակումների վերացումը, ֆիզիկական հաշմանդամություն և տեղաշարժման սահմանափակումներ ունեցող անձանց համար քվեարկության ընթացակարգերի հասանելիությունը մեծացնող միջոցների ձեռնարկումը, մեկից ավելի քաղաքացիություն ունեցող անձանց առաջադրման իրավունքի սահմանափակումների վերացումը, լրատվամիջոցների իրական սեփականատերերի բացահայտումը, ընտրողների անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող հարցերը, զինձառայողների և ազատությունից զրկված անձանց քվեարկության նկատմամբ որևէ միջամտության բացառումը, ընտրողների ցուցակների կազմման և վարման գործընթացի արդյունավետության բարձրացումը, բանավեճի և լուսաբանման վերաբերյալ կարգավորումների նախատեսումը, դիտորդական գործունեությամբ ընտրական գործընթացների վերահսկողության զարգացումը, ընտրողների ցուցակի կազմման և վարման գործընթացի արդյունավետության բարձրացումը:

## ԱՅՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՌԻՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

16. Ինչ վերաբերում է դատական իշխանության բարեփոխման նպատակին, ապա պետք է փաստել, որ արդեն իսկ թույլ է տրվել ռազմավարական սխալ՝ նախապես հրապարակելով «Դատական օրենսգրքը սահմանադրական փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը մինչև սույն ռազմավարության հանրայնացումը: Նշված մեթոդական սխալի հետևանքն է նաև, որ Ռազմավարությամբ մասնակի կրկնվել են այն հիմնական միջոցառումները, որոնք նախատեսվել են նշված փաթեթով: Նկատի ունենալով, որ դրանց վերաբերյալ նկատառումները նշվել են նաև 2019 թվականի օգոստոսի 26-ին Իրավաբանների հայկական ասոցիացիայի և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կողմից պատրաստած *«Կարծիք, դիտողություններ և առաջարկություններ՝ Դատական օրենսգրքի, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքի և հարակից այլ օրենքների նախագծերի վերաբերյալ»* փաստաթղթում,<sup>9</sup> որը ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարությանը և հանրայնացվել է, ուստի ձեռնպահ կմնանք սույն փաստաթղթի շրջանակներում վերստին անդրադառնալ դրանց: Առավել ևս, այն պայմաններում, երբ վերը նշված երկու փաստաթղթերը որևէ նոր բան գրեթե չի պարունակում:

17. 2019 թվականի օգոստոսի 26-ին ԻՀԱ-ի և Կոալիցիայի կողմից պատրաստած *«Կարծիք, դիտողություններ և առաջարկություններ՝ Դատական օրենսգրքի, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքի և հարակից այլ օրենքների նախագծերի վերաբերյալ»* փաստաթղթում արդեն իսկ արձանագրվել է, որ անընդունելի է դատավորների տարիքային շեմի նվազեցումը և պահանջվող աշխատանքային ստաժի իջեցումը: Սա մասնագիտական աշխատանք է, որն անպայմանորեն ենթադրում է նաև որոշակի կենսափորձի ու աշխատանքային առավել պատկառելի կենսագրության առկայություն: Հետևապես, նման իրավակարգավորումն իրականում ավելի շատ առաջացնում է խնդիր, քան հավակնում լուծել ուղրտում առկա իրական մարտահրավերները:

Ավելին, խիստ վիճահարուց է նաև դատավորի թեկնածուի համար պահանջվող մագիստրոսի որակավորումն իջեցնելու որդեգրված քաղաքականությունը: Եվ դա այն պայմաններում, երբ ՀՀ Կառավարության 2019թ. ընդունված ծրագրով որպես գերակա նպատակ շեշտադրվել է արհեստավարժ դատական իշխանության ձևավորումը:

<sup>9</sup> Տե՛ս 2019 թվականի օգոստոսի 26-ին ԻՀԱ-ի և Կոալիցիայի կողմից պատրաստած *«Կարծիք, դիտողություններ և առաջարկություններ՝ Դատական օրենսգրքի, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքի և հարակից այլ օրենքների նախագծերի վերաբերյալ»* փաստաթուղթը հետևյալ հղմամբ՝ <https://armia.am/44548.html>:

18. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ կառուցակարգերում որևէ նոր բան չի ավելացնում «ակնհայտ ու կոպիտ» բառերի փոխարինումը «դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ» բառերով: Ըստ էության, այն դարձյալ ենթադրում է հայեցողական ու անորոշ գնահատում ու սկզբունքորեն չի համադրվում իրավական որոշակիության գաղափարի հետ: Այն որևէ կերպ համադրելի չէ նաև հանրային վստահության վրա հիմնված դատական իշխանությունն ձևավորելու ՀՀ Կառավարության տեսլականի հետ:

19. Քրեական ենթամշակույթի վերացումը՝ որպես ռազմավարական նպատակ դիտարկելու առկա մոտեցումն ընդունելի չէ այն պատճառով, որ վերջինս արդեն իսկ ընդգրկված է քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի ռազմավարության մեջ: Ընդ որում, նույն դատողությունը վերաբերում է նաև այլընտրանքային խափանման և պատժի միջոցների ներդրմանն ուղղված միջոցառմանը: Առաջարկում ենք հանել սույն կարգավորումը նախագծից և խուսափել կրկնություններից այլ ոլորտային ռազմավարությունների հետ:

20. Կարծում ենք, որ ռազմավարության մակարդակում պիտի առավել համարժեք որոշակիությամբ հստակեցվեն քաղաքացիական և վարչական դատավարության ոլորտում առկա իրական խնդիրները և դրանց լուծման ընդունելի բանաձևումները: Հակառակ պարագայում առկա չի լինի այս ստուգիչ ցուցիչը, որը կարող է փաստել Ռազմավարության իրական կատարումը: Այս իմաստով, ակներև է, որ վարչական արդարադատության ոլորտի հիմնախնդիրներին Նախագծով համարժեք ուշադրություն չի դարձվել, նշվել են մի քանի՝ առավելապես իրադրային խնդիրներ: Մինչդեռ, 2018 ընդունված քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, ինչպես նաև 2013 ընդունված վարչական դատավարության օրենսգիրքը ներառում են առերևույթ սահմանադրականության խնդիրներ առաջացնող բազմաթիվ բացեր, որոնք պետք է մեծ մասով լուծվեն նշված ռազմավարությամբ ամրագրված միջոցառումների միջոցով: Օրինակ, վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածով սահմանված անկախ գործի ելքից դատական ծախսերի եռապատիկի չափով հատուցում նախատեսող պարտականությունը գործին մասնակցող այն անձի համար, ով վարչական դատարանում չի ներկայացրել ապացույց, ներկայացուցչության հիմքերի անհարկի տարբերությունը քաղաքացիական և վարչական դատավարություններում, պարտավորեցման հայցով ապացուցման բեռի բաշխման հետ կապված հիմնախնդիրները, ներկայացուցչին

վարույթին հեռացնելու ինստիտուտը, վարչական ակտի գոյությանը վստահության իրավունքի ոչ համարժեք օրենսդրական հիմքերն ու ձևավորված իրավակիրառ պրակտիկան, քաղաքացիական դատավարությունում գործին մասնակցող անձանց՝ որպես թարգմանիչ հանդես գալու հնարավորություն ամրագրող դրույթը, լուսանկարների, ձայնագրությունների և տեսագրությունների որպես ապացույց օգտագործման օրենսդրական խիստ անորոշ խոչընդոտները, դատական ծանուցագիրը հասցեատիրոջ հետ համատեղ բնակվող կամ աշխատող չափահաս անձին հանձնելու հնարավորությունն ամրագրող դրույթը և այլն: Հետևապես, առաջարկում ենք այս հատվածում կատարել ոլորտում առկա իրական խնդիրների համարժեք գույքագրում: Ընդ որում, նույն դատողությունը վերաբերում է նաև նոտարական համակարգում, փաստաբանական համակարգում, հարկադիր կատարման ոլորտում նախանշվող միջոցառումներին:

**Իրավաբանների հայկական ասոցիացիա,  
Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա  
«24» սեպտեմբերի, 2019թ**